ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Զարա Ասլանյան, Երիտասարդության հարցեի վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ռուսաստանի Դաշնության ք. Մոսկվա, նոյեմբերի 1-3, 2026թ.

3. Հրավիրող կողմը.

ԱՊՀ գործադիր կոմիտե

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցել ԱՊՀ երիտասարդության հարցերով խորհրդի նիստին

5. Քննարկված թեմաները.

- 2021–2030 թվականների ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային երիտասարդական համագործակցության ռազմավարության իրականացման 2025–2026 թվականների միջոցառումների ծրագրի կատարման հիմնական արդյունքների և 2027–2028 թվականների միջոցառումների ծրագրի մասին
- Կամավորական շարժմանն աջակցելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության զարգացման հայեցակարգի իրականացման 2025–2026 թվականների միջոցառումների ծրագրի կատարման հիմնական արդյունքների և 2027–2028 թվականների միջոցառումների ծրագրի մասին:
- ԱՊՀ կամավորների առաջին համաժողովի արդյունքների և ԱՊՀ կամավորների երկրորդ համաժողովի նախապատրաստման մասին: 2026 թվականին Հայաստանի Հանրապետության Կապան քաղաքում «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք» միջազգային նախագծի իրականացման արդյունքների և 2027 թվականին Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք» միջազգային նախագծի իրականացման միջոցառումների ծրագրի մասին:
- ԱՊՀ մասնակից պետությունների «100 գաղափար ԱՊՀ-ի համար» միջազգային երիտասարդական նախագծի միջազգային փուլի ավարտական միջոցառման քաղաքի որոշումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ԱՊՀ երիտասարդության հարցերով խորհրդի նիստից անդամները ներկայացրեցին իրենց երկրների երիտասարդական քաղաքականության զարգացումները: Զարա

Ասլանյանը ներկայացվել է ՀՀ երիտասարդական քաղաքականության ոլորտում իրականացվող համակարգային և ինստիտուցիոնալ բարեփոխումները, ինչպես նաև ոլորտի զարգացմանն ուղղված իրավական և ծրագրային հիմնական ուղղությունները:

Ելույթի սկզբում անդրադարձ է կատարվել 2025 թվականի մարտի 5-ին ընդունված «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքին (ՀՕ-58-Ն), որով առաջին անգամ համապարփակ իրավական կարգավորման են ենթարկվել երիտասարդական քաղաքականության հիմնական ուղղությունները, ոլորտում ներգրավված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, երիտասարդների իրավունքների և շահերի պաշտպանության, նրանց հասարակական, տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքին մասնակցության ապահովման հարցերը:

Նշվել է, որ օրենքի ընդունումը կարևոր հիմք է ստեղծել երիտասարդական աշխատանքի՝ որպես մասնագիտական գործունեության ինստիտուցիոնալացման, երիտասարդական ծառայությունների զարգացման, երիտասարդական կենտրոնների գործունեության կարգավորման:

Հետագայում նիստին ներկայացվեց ԱՊՀ մասնակից պետություններիի2025–2026 թվականների միջոցառումների ծրագրի կատարման հիմնական արդյունքները, որտեղ ՀՀ կողմից իրականցվել են առողջ ապրելակերպի, մեդիագրագիտության ուղղված ծրագրեր, որին մասնակցել են ԱՊՀ անդամ պետությունների (Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Ղազախստանի Հանրապետություն, Ղրղզստանի Հանրապետություն և Ուզբեկստանի Հանրապետություն) երիտասարդներ:

Հաջորդիվ ներկայացվել է ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք ծրագրի շրջանակում ՀՀ կողմից 2026-ի Կապան երիտասարդական մայրաքաղաքի շրջանակում իրականացված միջոցառումների հիմնական ուղղությունները, որոնք միտված են եղել երիտասարդների քաղաքացիական ակտիվության, կամավորության, առողջ ապրելակերպի, միջմշակութային հաղորդակցության, կրթական հնարավորությունների և միջազգային համագործակցության խթանմանը, որը նիստի մասնակիցներին ներկայացվել է նաև հաշվետու տեսահոլովակի տեսքով՝ այն կտեղադրվի ԱՊՀ կայքի «ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաք» հատվածում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նիստի ընթացքում ՌԴ ներկայացուցչի կողմից ներկայացվեց «Мы Вместе» միջոցառման հավաքագրման գործընթացը, որը բոլոր ԱՊՀ մասնակից պետությունները ստացել են և նախատեսվում է միայն այն տարածել՝ երիտասարդներին իրազեկելու նպատակով:

ԱՊՀ մասնակից պետությունների «100 գաղափար ԱՊՀ-ի համար» միջազգային երիտասարդական նախագծի միջազգային փուլի ավարտական միջոցառումները 2027 թ. կիարականցվի Ղրղզստանի Հանրապետությունում, Բիշքեկ քաղաքում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

չկա

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

04.11.26թ.